ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-9-8-Ա

ք. Երևան 04.12.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի դեկտեմբերի 4-ի նիստում քննարկեց 2023 թվականի հունիսի 29-ին տնօրեն Գ. Ստեփանյանի կողմից ներկայացված «Ալեքսանդրեա վայնըրի» ՍՊԸ ընկերության (Երևան, Մոսկովյան 8, բն. 22ա-23, AM) «ALEX-ANDREA WINERY» (No20221181) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված համակցված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է ԱԾՄԴ 33-րդ դասի նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «ALEX» («Ցիտո Ֆարմ» ՍՊԸ, Երևան, Դավիթաշեն 1թ., 45շ., բն. 22 (AM), N 11099, 07.12.2006թ., N 11572, 26.03.2007թ.), «ALEX» («Ալեքս տեքստիլ» ՍՊԸ, Երևան 0032, Շահումյան 5 փ., տուն 37 Մալաթիա-Սեբաստիա (AM), N 28348, 14.01.2019թ.), «Alexandra» («Ալեքպոլ փրոջեքթս մենեջմենթ» ՍՊԸ, ՀՀ, Երևան 0079, Նոր Նորք, Ա. Միկոյան 17/2 (AM), N 35322, 16.08.2022թ.) և միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «ALEXANDRION» (BELLES MARKS LTD, Artemidos 3-5, ARTEMIDOS TOWER, 1 st floor, Flat/Office 101 CY-6020 Larnaca (CY), IR 845366, 27.10.2004) ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի

120- րդ, 121-րդ, 122-րդ, 130-րդ և 132-րդ կետերի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման կարող են լինել՝ համակցված ապրանքային նշանները և ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Համակցված ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցն առանձին վերցված, եթե դրանց մեջ տվյալ տարրերը հանդիսանում են հիմնական ընկալման տարրեր կամ տվյալ նշանների՝ այսպես կոչված «առաջնային ընկալման» տարրեր կամ «անվանումներ»: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշաններն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով, այն է՝ գրանցված համակցված ապրանքային նշանների մաս կազմող «ALEX» բառային տարրը, ինչպես նաև «ALEX» բառային ապրանքային նշանն ամբողջությամբ ներառված են ներկայացված ապրանքային նշանի մեջ, կազմելով նրա սկզբնամասը՝ «ALEX- ANDREA»: Ինչ վերաբերում է հայտարկված «ALEX - ANDREA» և գրանցված «ALEXANDRION» և «ALEXANDRA» ապրանքային նշաններին, ապա դրանց նմանությունը որոշվել է նշանը կազմող ձայնավորների և բաղաձայնների մոտիկությամբ և տարբերությունը կայանում է համեմատվող նիշերի վերջավորությունների մեջ՝ «ALEX - ANDREA», «ALEXANDRION» և «ALEXANDRA»:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու, փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Բողոքարկման խորհրդի անդամների մի մասը ելնելով «Վարչարարության և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ՝ վարչարարության մասին օրենք) դրույթներից կողմ էին, որ բողոքը բավարարվի, քանի որ հավասարաչափ մոտեցում պետք է ցույց տրվի յուրաքանչյուր անձի կողմից ներկայացված ապրանքային նշանի փորձաքննությանը և գրանցմանը, իսկ մյուս մասն էլ հիմնվելով «Ապրանքային նշանների մասին» օրենքով սահմանված ապրանքային նշանի մերժման հիմքերի առկայությանը կարծում էին, որ այս դեպքում

վարչարարության մասին օրենքի դրույթները կիրառելի չեն հետևյալ պատճառաբանությամբ. մատնանշված վարչարարության մասին օրենքի դրույթները կիրառելի չեն տվյալ դեպքում, քանի որ «Ապրանքային նշանների մասին» օրենքով առկա է ապրանքային նշանի մերժման հիմքերը և վիճարկվող ապրանքային նշանի գրանցումը կխախտի այլ անձանց բացառիկ իրավունքը և բողոքը պետք է մերժվի, հետևաբար ապրանքային նշանի գրանցման մերժումը եղել է իրավաչափ:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը պնդում էր, որ որոշումը իրավաչափ և այն պետք է թողնել ուժի մեջ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում 7 կողմ և 2 դեմ ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

Գ. Ստեփանյանի կողմից ներկայացված «Ալեքսանդրեա վայնըրի» ՍՊԸ ընկերության «ALEX-ANDREA WINERY» (No20221181) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը բավարարել, փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչել և ապրանքային նշանի վկայագիր տալ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ